ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆԸ ՈՒՐԱՐՏԱԳԵՏ

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Համաշխարհային սեպագրագիտական մշակույթի, այդ թվում՝ Ուրարտուի պատմության և քաղաքակրթության ուսումնասիրման բնագավառում մեծ է հայ ականավոր գիտնական, ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանի (1887–1957) ներդրումը: Ընդարձակ են նրա հետազոտության սահմանները. հատկապես անգնահատելի է նրա լուման Վանի թագավորության ռազմաքաղաքական պատմության, տեղանունների, լեզվաբանության, ինչպես նաև դիցարանի ուսումնասիրության բնագավառում: Ժամանակի հրամայականն է վերանայել և արժևորել նշանավոր արևելագետի վաստակը ուրարտագիտության մեջ, քանզի նրա կատարած շատ վերլուծություններ անհայտ են եղել խորհրդային, հետխորհրդային և օտարազգի հետազոտողների համար, ու նրա առաջ քաշած մի շարք դիտարկումներ կարիք ունեն լրացումների: Նկատենք, որ մեզանում նման ուսումնասիրություն առ այսօր չի կատարվել: Ստորև փորձ է արվում արժևորել Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունները, նրա առաջարկած հիմնավորումները՝ համադրելով մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքների հետ, մատնանշելով դրանց տեղն ու դերն ուրարտագիտության առաջընթացի գործում:

Ուրարտագիտության բնագավառում Գ. Ղափանցյանի աշխատությունները[1] *մեծ նպաստ են բերել համաշխարհային ուրարտագիտության զարգացմանը: Անդրադառնանք այն ոլորտներին, որոնք առանձնապես եղել են Գ. Ղափանցյանի ուշադրության կենտրոնում:*

Ուրարտերեն լեզու: *Ուրարտագիտության և հատկապես հայագիտության ընդհանուր պատկերի վրա առանձնապես կարևոր են Գ. Ղափանցյանի ուսումնասիրություններն*

---

[1] Общие элементы между урартским и хеттским языками. Эривань, 1936; *Ուրարտուի պատմությունը (այսուհետև՝ ՈՒՊ), Երևան, 1940,* Хайаса – колыбель армян.– Историко-лингвистические работы. К начальной истории армян. Древняя Малая Азия (*այսուհետև՝* ИЛР), т. I. Ереван, 1956, с. 11–259; Историко-лингвистическое значение топонимики Древней Армении (*այսուհետև՝* ИЛТДА). Ереван, 1940; Об урартском божестве Adarutha.– «Известия» АН АрмССР, 1944, № 6–7, с. 25–32; Об урартском божестве Щебиту.– «Известия» АН АрмССР, 1946, № 11–12, с. 9–18; Об урартском божестве Щебиту. Ереван, 1947; *Մի քանի հին ոճեր ու արտահայտություններ ուրարտական արձանագրությունների մեջ.– «Տեղեկագիր», 1943, -3, էջ 47–62,* О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений.– “Archiv Orientalni”, vol. 17 ,1949, № 1, с. 360–373; О двух социально-политических терминах древнего ближнего Востока: «владыко, царь» и «владетель или правитель области».– «Вестник древней истории» (*այսուհետև՝* ВДИ), 1949, № 3, с. 10—13; *Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), Երևան, 1961, Անտիպ գործեր, Երևան, 2008:*

ուրարտերեն լեզվի վերաբերյալ[2]*: Դեռևս 1930-ական թվականներից նա սկսում է ուսումնասիրել փոքրասիական մի շարք մեռած լեզուներ, ինչպես, օրինակ, խեթերեն, ուրարտերեն, խուռիերեն, բալայերեն և այլն: Լինելով այդ լեզուների մասնագետ՝ Գ. Ղափանցյանը փորձում էր պարզել, թե դրանք ինչ ազդեցություն են թողել հարևան ժողովուրդների լեզուների վրա: Խեթական, ուրարտական, խուռիական և փոքրասիական կամ ասիանիկ այլ լեզուների ու հայերենի միջև եղած ընդհանրությունները նրան հիմք են տվել ենթադրելու, որ հայոց լեզուն ևս ասիանիկ լեզու է: Նրա գրած ուսումնասիրություններն ապացույցն են այն բանի, որ այդ լեզուների բառապաշարից անցել են հայերենին և իրենց ներդրումն են ունեցել նրա զարգացման մեջ: Այդ աշխատություններից*

[2] *XIX դարավերջին և XX դարասկզբին ուրարտերեն լեզվի ուսումնասիրությամբ, բացի հայ հետազոտողներից, զբաղվել են նաև մի շարք օտարազգիներ: Հիշատակության են արժանի՝* K. B a s m a d j i a n. Une nouvelle inscription Arméniqaue ou Vannique.– “Actes du onzième Congrès des Orientalistes”, vol. 1. Paris, 1897, ed. Ernest Leroux, pp. 257–259; К. П а т к а н о в. Ванские надписи и значение их для Передней Азии.– «Журнал министерства народного Просвешения», 1881; J. S a n d a l g i a n. L’idiom des inscriptions cunéformes urartiques. Rome, 1898; A. S a y c e. Some New Vannic Inscriptions.– “Journal of the Royal Asiatic Society”, 1929, pp. 297–336; C. F. L e h m a n n - H a u p t. Chaldische Forschungen 1, Der Name “Chalder”.– “Verhandlungen der Berliner Gesellschaft für Anthropogie, Ethnologie und Urgeschichte”, 1896, 28, S. 586–589; A. D. M o r d t m a n n. Entzifferung und Erklärung der armenischen Keilschriften von Van und Umgegend.– “Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft”, 26, 1872, S. 465–696; Н. М а р р. Фрагмент халдской надписи из Алашкерта.– «Известия Государственной (Российской) Академии истории материальной культуры», 1921, 1, с. 51–60; J. F r i e d r i c h. Die Inschrift des urartäischen Königs Rusa I aus Nor-Bajazet.– “Archiv Orientální”, 3, 1931, S. 257–271. *XX դարի երկրորդ կեսից խնդրո առարկա բնագավառում իրենց ծանրակշիռ ներդրումն են արել Ն. Հարությունյանը, Ի. Դյակոնովը, Մ. Խաչիկյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Կարագյոզյանը, Մ. Սալվինին, Ա. Չիլինգիրօղլուն, Ջ. Վիլհելմը, Ջ. Գրեպպինը, Ի. Յակուբովիչը (տե՛ս* Н. А р у т ю н я н. Заметки по урартской эпиграфике.– «Известия» АН АрмССР (Общественные науки), 1957, №12, с. 65–76; *նույնի* ՝ Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև՝* КУКН), Ереван, 2001; И. Д ь я к о н о в. Материалы к фонетике урартского языка.– «Вопросы грамматики и истории восточных языков». М., 1958, с. 27–33; *նույնի* ՝ Hurrisch und Urartäisch, Müncherner Studien zur Sprachwissenschaft, Be iheft 6 NF. Mьnich, 1971; М. Х а ч и к я н. Хурритский и урартский языки. Ереван, 1985, *նույնի՝ Խուռի-ուրարտա-հայկականք.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, էջ 265–269, նույնի՝* Notes on the Urartian Verb.– “Studi Micenei ed Egeo – Anatolici” *(այսուհետև՝* SMEA*),* XLVIII, Roma, 2006, pp. 139–149; *Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, նույնի՝ Ուրարտերենը և հայերենը.– Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 127–169, Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. Սարդուրի III-ի հրամանագիրը.– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1960, -10, էջ 79–85, նույնի՝ Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, Երևան, 1998,* M. S a l v i n i. Einige neue urartäische-hurritische Wortgleichungen.– “Orientalia”, 1970, 39, S. 409–411; *նույնի* ՝ Problemi di morfologia nominale in urarteo, Annali del Srminario di Studi del Mondo Classico.– “Sezione Linguistica”, 1, 1979, pp. 97–115; M. S a l v i n i, A. Ç i l i g i r o ğ l u. When Was the Castle of Ayanis Built and What is the Meaning of the Word “šuri”?.– “Anatolian Studies”, Ankara, 1999, vol. 49, pp. 55–61; G. W i l h e l m. Zur urartäischen Nominalflexion.– “Zeitschrift für Assyriologie”, 66, 1976, S. 105–119; J. G r e p p i n. Hurro–Urartian–North–East Caucasian–Armenian Linguistic Connections.– “Aramazd”, vol. V, Issue. 1, 2010, pp. 116–120; I. Y a - k u b o v i c h. Two Armenian Etymolologies.– “Caucasian and Near Eastern Studies”, XIII, Giorgi Melikishvili memorial volume edited by I. Tatišvili, M. Hvedelidze, L. Gordeziani, Tbilisi, 2009, pp. 266-272; *նույնի՝* Morphological Negation in Urartian.– “Aramazd”, vol. V, Issue 1, 2010, pp. 141–165.

մասնավորապես հիշատակության է արժանի “Chetto-Armeniaca”-*ն, որտեղ հեղինակն բացահայտել է խեթական և հայկական լեզվական բազմաթիվ ընդհանրություններ*[3]*:*

Արևելագետ-հայագետ Գ. Ղափանցյանը տասնամյակներ շարունակ համառ ջանքեր է գործադրել ուրարտերեն սեպագիր լեզվի ուսումնասիրության ուղղությամբ: Ըստ որ-ում, իր պրպտումները կատարել է համակողմանի՝ խորամուխ լինելով այդ լեզվի բոլոր ծալքերում: Հնդեվրոպական բառարմատներ է տեսել ուրարտերենում, բացահայտել է ուրարտա-խեթական և ուրարտա-խուրրիական ընդհանրություններ, նկատել է աքքադերենի ազդեցությունն ուրարտերենի ու հայերենի վրա և, վերջապես, ի հայտ է բերել ուրարտա-հայկական լեզվական, մանավանդ՝ բառապաշարային բազում ընդհանրություններ[4]*: Ինչ վերաբերում է վերջինիս, ապա, քաջատեղյակ լինելով ժամանակի մասնագիտական, հատկապես արտասահմանյան օտարալեզու գրականությանը, նաև՝ սեպագիր ուրարտերենին, խեթերենին, խուրրիերենին և աքքադերենին, Գ. Ղափանցյանն իր աշխատություններում մի կողմից ամփոփել է արդեն հայտնի տարալեզու, ընթերցման և ընկալման համար հաճախ անմատչելի նյութը, մյուս կողմից՝ այն համալրել է իր սեփական, մեծ մասամբ համոզիչ եզրակացություններով: Եվ դրա ցանկալի արդյունքը եղել է արևելագետի մոտ երեք տասնյակ ուրարտա-հայկական բառապաշարային ընդհանրությունները, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև.*

1. at(u) – *«ուտել», «լափել», «ավերել»: Հմմտ. խեթերեն* at-/et- *նույնիմաստ բայը*[5]*:* KЗ (GU7) *և* Šը *շումերագրամների, նաև աքքադերեն* akālu-*ի ուրարտերեն համապատասխանությունն է*[6]*: Ուրարտական արձանագրություններում հիշատակվում է ռազմական արշավանքների ժամանակ օտար երկրների ավերման և քաղաքների հրկիզման նկարագրություններում* (KURebani atubi URUMEŠ amaštubi/ GIBδL-bi)[7]*:* at(u)-*ն հոմանիշ է ուրարտերեն* arar(u) *և հայերեն «խարխարել» բայերին*[8]*:*

---

[3] *Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Նյութեր հայ գիտնականների կենսագրության և բիբլիոգրաֆիայի համար, Երևան, 1959, էջ 11–23:*

[4] *Տե՛ս Գ. Ղափանցյանի հետևյալ աշխատությունները.* Общие элементы между урартским и хеттским языками; ИЛР, т. 1, с. 331—408; *ՈՒՊ, էջ 23–40,* ИЛТДА, с. 3–116; *Մի քանի հին ոճեր ու արտահայտություններ ուրարտական արձանագրությունների մեջ, էջ 47–62,* К происхождению армянского языка. Ереван, 1946; О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений, с. 360–373; О двух социально-политических терминах древнего ближнего Востока: “владыко, царь” и “владетель или правитель области”, с. 10–13; ИЛР, с. 465–470; *ՀԼՊ, էջ 130–147, Անտիպ գործեր, էջ 5–63:*

[5] *Տե՛ս* Г. А. К а п а н ц я н. Общие элементы между урартским и хеттским языками, էջ *52,* J. F r i e d r i c h. Hethitishes WΦrterbuch, (*այսուհետև՝* HWb). Heidelberg, 1952, S. 44; Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы, т. II. Тбилиси, 1984, с. 897.

[6] КУКН, с. 439.

[7] КУКН, № 173, III *տող 13, V, տող 4, 24, 38,* № *241B, տող 18, C, տող 36 և այլն:*

[8] J. S a n d a l g i a n. Les inscriptions cunéiformes urartiques *(այսուհետև՝* ICU). Venise, 1900, p. 371; Г. Б. Д ж а у к я н. Урартские заимствования в армянском языке.– Культурное наследие Востока. Л., 1985, с. *366.*

2. ḫubi – *«հովիտ». Գ. Ղափանցյանը այսպես է ստուգաբանում ուրարտերենի ubi բառը՝ ելնելով ուրարտա-հայկական հայտնի օրինաչափությունից*[9]*: Ինչպես հայտնի է, ուրարտական արձանագրություններում* ḫubi *– «հովիտ» բառով կազմված են մի շարք տեղանուններ.* KUR Ašq / kajai – ḫubi, KUR Igarab – ḫubi, mMenuainie – ḫubi, KUR Niribai – ḫubi, KUR Paqaja – ḫubi, KUR Quarlini – ḫubi / mRusainie – ḫubi, KUR Tuaraṣiniei – ḫubi[10]*: Այստեղ, մասնավորապես, հատկանշական է* KUR *Tuaraṣiniei - ḫubi – Տուարածահովիտը, որի առանձնահատկությունը հստակ նշմարվում է ոչ միայն աշխարհագրական այդ անունների միօրինակ ստուգաբանության, այլև Խորխորյան տարեգրության տվյալների մեջ, որտեղ աշխարհագրական այդ միավորը հիշատակված է եղել Արածանիի (ասորեստանյան սեպագիր աղբյուրներում՝ Արծանիայի) հովտում, և որտեղ Դահնալի գետից անցկացված ջրանցքն ապահովել է ուրարտական թագավորության բարօրությունը (*ieše ÍD Dainali tinini PA$_5$ agubi zadubi kulmeie KUR šuraue*)*[11]*: Նույնը կարելի է ասել* KUR Quarlini - ubi՝ *հովտի մասին, որը Ռուսա II Զվարթնոցի* КУКН, № 421 *արձանագրության տվյալներով սկսվում է Իլդարունիա-Հրազդան գետից անցկացված Ումեշինի ջրանցքի հովտից և Արարատյան դաշտավայրում հայտնի է իր ցանքադաշտերով, խաղողի ու պտղատու հարուստ այգիներով*[12]*:*

3. (GIŠ)šuri *– սուր, նետ. Գ. Ղափանցյանն այսպես է ստուգաբանում ուրարտա-հայկական բառապաշարային այս ընդհանրությունը*[13]*:* (GIŠ)šuri-*ն* GIŠ *շումերագրամի և* (GIŠ)BE.LE (bēlu$_{II}$) *աքքադագրամի ուրարտական համապատասխանությունն է*[14] *և նույնական է խուրրիերեն* šauri- *ի հետ*[15]*: Անհրաժեշտ է նշել, որ դեռևս 1943 թ. Գ. Ղափանցյանը «Մի քանի հին ոճեր ու արտահայտություններ ուրարտական արձանագրությունների մեջ» հոդվածում (էջ 47–62) ուրարտերեն* (GIŠ)šuri *բառը համարում է «նիզակ, գենք, նետ» (էջ 58): Ըստ նրա՝ այս բառը, որն առջևում ունի «բուսեղեն, փայտեղեն» գաղափարանիշ-որոշիչը, նշանակել է «եղեգն», «եղեգնյա ցուպ»: Գիտնականն այն ստուգաբանորեն համարում է ապացուցված՝ նկատի ունենալով գրաբարյան «շուարն» բառը, ինչը նշանակել է «ձող կամ մական խաղու. սլաք, նիզակ ձիավորի»: Ըստ նրա՝ հին* šur *արմատը հայերի մոտ դարձել է* šuar(n), *ապա՝ լիաձայնությամբ՝* šawar*:*

Ուրարտերենում šuri-, *ըստ Գ. Ղափանցյանի, նշանակում է ոչ միայն եղեգից պատրաստված մահակ կամ գավազան, որը Խալդի աստծու ռեգալիան է եղել, այլև*

---

[9] *ՈւՊ, էջ 55,* Г. К а п а н ц я н. Хайаса. Ереван, 1943, с. 195.

[10] КУКН, № 173, IV *տող 54, -174B2, տող 25, -173, II, տող 13, -454, -173, V, տող 12, -421, տողեր 6, 16–17:*

[11] КУКН, № 173, V*, տողեր 13, 17–18:*

[12] КУКН, № 421, *տողեր 5–17:*

[13] Г. К а п а н ц я н. О концептуально–идеологической стороне некоторых урартских слов и выражений, с. 370–371; *ն ո ւ յ ն ի՝ Արմատական բառարանի առթիվ դիտողություններ.– Անտիպ գործեր, էջ 8, 45:*

[14] W. v o n S o d e n. Akkadisches Handwörterbuch *(այսուհետև՝* Ahw), I. Wiesbaden, 1965, S. 120.

[15] V. H a a s. Review of Melikishvili 1971.– “Oriens Antiquus”, 11, 1973, S. 233.

*սովորական ռազմազենք, հավանաբար, «նիզակ» (*копье*) իմաստով*[16]*:*

Նկատենք, սակայն, որ Գ. Ղափանցյանից անկախ šuri *–ին «զենք» է կամ «սուր» համադրությանը հանգել են մի շարք ուրարտագետներ՝ Ի. Դյակոնովը, Ջ. Վիլհելմը, Մ. Սալվինին, Ա. Չիլիգիրօղլուն*[17]*, ովքեր նույնիսկ ծանոթ չեն եղել դափանցյանական այս ստուգաբանությանը: Վ. Հաասն էլ էթիմոլոգիական կապ է տեսել խուռիական* šauri *«զենք» և ուրատական* šuri *բառերի միջև*[18]*: Այս համադրությունը ևս վկայում է Գ. Ղափանցյանի՝ ականավոր լեզվաբան լինելու մասին, քանի որ 1943 թ. հետո անցել էին տասնամյակներ, երբ նրա այդ դիտարկումը կրկին դարձավ արդիական:*

Ի դեպ, Ն. Հարությունյանը բացահայտել է, որ Ռուսա II Այանիսի և Արծկեի ու Կարմիր-բլուրի КУКН, №№ 415, 425 *արձանագրություններում BE.LI SIKIL-ը հակադրված է* KÙ TUKUL-kumemuše*-ին*[19]*: Հետևաբար, ելնելով այդ բառերի SIKIL K*ù *մակդիրներից, հանգել է այն հետևության, որ BE.LI-ն, ակներևաբար, համապատասխանում է ուրարտերեն* (GIŠ)šuri*-ին և հանդիսացել է մարտական զենք (հմմտ. Սարդուրյան տարեգրության* КУКН, № 241G, *տող 9* BE.LI gunušiniei*-ն), իսկ* KÙ TUKUL*-ը կամ* KÙ kumemuše*-ն՝ «անմեղ զենք»: Այսինքն՝ մի դեպքում գործ ունենք մարտերում գործադրվող զենքի, մյուս դեպքում՝ արվեստի և զարդարանքի նույնատիպ առարկայի հետ*[20]*:*

Ուրարտուի պատմությունը. *Խորհրդային Հայաստանում Գ. Ղափանցյանն առաջինն էր, որ հայերեն գրել է մենագրական ընդարձակ ուսումնասիրություն՝ «Ուրարտուի պատմություն»-ը, որտեղ մանրամասն քննարկել է ժամանակի ուրարտագիտությանը հայտնի սեպագիր արձանագրությունների տվյալներն Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության, տնտեսության, կրոնի, տեղագրության, ուրարտերենի քերականության և բառապաշարի բազում հարցերի վերաբերյալ*[21]*: Ուրարտուի ռազմաքաղաքական պատ-*

---

[16] *Գ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Մի քանի հին ոճեր ու արտահայտություններ ուրարտական արձանագրությունների մեջ, էջ 58–59:*

[17] И. Д ь я к о н о в, Заметки по урартской эпиграфике II.– «Эпиграфика Востока», 6, 1952, с. 106—111, G. W i l h e l m. *Sura/i* in Kargemiš und das Uratäische Gentiliz *Šurele*.– SMEA, 1993, Fasc. XXXI, p. 137; M. S a l v i n i, A. Ç i l i n g i r o ğ l u. *Նշվ. աշխ., էջ 55–61: Հարկ է նշել, որ Ջ. Վիլհելմն իր վերը նշված հոդվածում գրում է, թե ուրարտական* šuri*-ի համադրությունը «զենք» բառին կատարել է Ի. Դյակոնովը, ում և հետևել են մյուս գիտնականները (տե՛ս* G. W i l h e l m. *Նշվ. աշխ., էջ 137): Սակայն վերն արդեն նշել ենք (մեկ անգամ էլ կրկնենք), որ այդ համադրությունը կատարել է Գ. Ղափանցյանը, ինչին անտեղյակ են եղել օտարազգի հետազոտողներն ու տասնամյակներ անց հանգել միևնույն հետևության:*

[18] V. H a a s. *Նշվ. աշխ., էջ 233:*

[19] *Տե՛ս* КУКН, № 415*, տող 4, 425, տողեր 6–7:* A. Ç i l i n g i r o ğ l u, M. S a l v i n i. Ayanis. I. Ten Years' Exavations at Rusaþinili Eiduru-Kai 1988–1998, Documenta Asiana VI. Rome, 2001, p. 257, section IV*:*

[20] *Ն. Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Ուրարտական սեպագրի* kumemuše *և* BE.LI *բառերի ստուգաբանությունը.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովածու (այսուհետև՝ ՄՄԱԵԺ), XXII, Երևան, 2003, էջ 201–209:*

[21] *Նշենք, որ Գ. Ղափանցյանի հետ միաժամանակ, բայց մայր հայրենիքից դուրս, Բիայնիլի-Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրությամբ զբաղվում էր իր ժամանակաշրջանի խոշոր հայագետներից ևս մեկը՝ Նիկողայոս Ադոնցը:*

մությանը վերաբերող նրա դիտարկումներն առավել արժեքավորվում են արդի ուրարտագիտության ձեռքբերումների, նոր մոտեցումների լույսի ներքո[22]:

Գ. Ղափանցյանն Ուրարտուի ռազմաքաղաքական պատմությունը դասակարգել է հետևյալ կերպ.

ա) I շրջանը սկսվում է ուրարտական թագավոր Լուտիպրիի որդի Սարդուրիից (Ք. ա. 835–820 թթ.), որն իրեն անվանում էր Նաիրիի թագավոր և բնակություն էր հաստատել Տուշպա-Վան քաղաքում:

բ) II շրջանը սկսում է Ք. ա. IX դարավերջից և այն անվանում Վանյան շրջան: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է որպես ուրարտական պետության վերելքի դարաշրջան՝ Իշպուինի (Ք. ա. 820–800 թթ.) – Մենուա (Ք. ա. 800–780 թթ.), Արգիշտի I (Ք. ա. 780–755 թթ.), Սարդուրի II (Ք. ա. 755–730 թթ.) և Ռուսա I (Ք. ա. 730–714 թթ.) թագավորների օրոք մինչև 714 թ.՝ Ռուսա I մահը: Այս շրջանը տևել է 100 տարի:

գ) երրորդ շրջանը սկսվում է Ք. ա. 714 թ.-ից հետո, երբ Ռուսա I պարտություն է կրում ասորեստանյան արքա Սարգոն II կողմից: Այս շրջանը նա անվանում է Ուրարտուի և ուրարտացիների թուլացման և կործանման շրջան[23]:

Ուրարտուի պատմությանը վերաբերող Գ. Ղափանցյանի դիտարկումներից կարևոր է սեպագիր աղբյուրների Uruatri-Urartu անվանումը և աստվածաշնչյան «Արարատ»-ի մեկնաբանությունը: Այդ մասին նա նշում է, որ Ջեզիրե իբն Օմար քաղաքից

Կյանքի վերջին տարիներին նրա գրած հետազոտությունը լույս է տեսել հետմահու. 1946 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով հրատարակվել է «Հայաստանի պատմություն:Ակունքները X–VI դդ. մ. թ. ա.» խորագրով ստվարածավալ աշխատության մեջ, ուր ներկայացվում է հայ ժողովրդի քաղաքական պատմության և ներքին կյանքին վերաբերող մանրամասնություններ: Իր աշխատության մեջ նա հիմնականում անդրադարձել է Բիայնիլի-Ուրարտուի (մ. թ. ա. IX–VI դդ.) ռազմաքաղաքական իրադարձություններին, տեղանուններին, դիցանուններին [N. A d o n t z. Histoire d´Arménie. Les origins du X siècle au VI (Av. J. C.) *(այսուհետև՝ ՀԱ).* Paris, 1946*: Տե՛ս նաև սույն գրքի Վ. Պ. Մեղրոսյանի հայերեն թարգմանությունը և Գ. Խ. Սարգսյանի խմբագրությունը՝ «Հայաստանի Պատմություն. Ակունքները X–VI դդ. մ. թ. ա.» (այսուհետև՝ ՀՊ), Երևան, 1972, Ն. Ադոնց. Քննական պատմություն հայոց, հ. V, Երևան, 2009*]:

[22] *Գ. Ղափանցյանից և Ն. Ադոնցից հետո Բիայնիլի-Ուրարտուի ռազմաքաղաքական պատմության հարցերով, ուրարտական արքաների երթուղիներով, նաև վերջիններիս արձանագրությունների ընթերցումներով զբաղվել և ուրարտագիտության մեջ հիմնարար աշատություններ են գրել՝* Г. М е л и к и ш в и л и. Наири-Урарту. Тбилиси, 1954; Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту). Ереван, 1970 *(վերահրատարակվել է նաև 2006 թ. Սանկտ-Պետերբուրգում*; E. G r e k y a n. The Battle of Uauš Revisited.– “Aramazd”, vol. V, Issue 1, 2010, pp. 83–108; *նույնի՝* When the Arrows are Depleted (Towards the Fall of the Urartian Empire).– “Aramazd”, vol. VI, Issue 2, 2009, pp. 98–126; *նույնի՝ Վանի թագավորության անկման խնդրի շուրջ.– Հայկազունիներ, զեկուցումների դրույթներ, Երևան, 2012, էջ 57–60,* M. S a l v i n i. Geschichte und Kultur Urartaer, Darmschtadt, 1995; A. Ç i l i n g i r o ğ l u. Urartu karlliği, Tarihi ve Sanati, Izmir, 1997.

[23] *ՈՒՊ, էջ 123: Ուրարտական պետության վերջին շրջանի պատմությունը տե՛ս նաև՝* И. Д ь я к о н о в. Последние годы урартского государства.– ВДИ, 1951, № 1, с. 29 и сл.; *նույնի՝* Урартские письма и документы. М.–Л., 1963, с. 28–29; Н. А р у т ю н я н. Некоторые вопросы последнего периода истории Урарту.– Древний Восток, т. 2. Ереван, 1976, с. 98 и сл.; M. S a l v i n i. Geschichte und Kultur Urartдer, Darmstadt, 1995, S. 109; *նույնի՝* Argišti, Rusa, Erimena, Rusa und die Löwenschwänze: Eine urartäische Palastgeschichte des VII. Jh. V. Chr.– “Aramazd”, vol. II, Yerevan, 2007, pp. 146–162.

արևելք հիշատակվում են «Ջուդի լեռները»: Համաձայն ասորեստանյան և արաբական ավանդությունների՝ ջրհեղեղից հետո այստեղ է կանգ առել Նոյյան տապանը: Այս գավառն էլ, ըստ նրա, եղել է Ուրուատրին: Գ. Ղափանցյանի համար համոզիչ է այն, որ այդ առասպելը կապվում է Աստվածաշնչի Արարատ (Ուրարտու/Ուրուատրի) անվան հետ: Նա, իրավամբ, պնդում է, որ Աստվածաշնչում հիշատակվող Արարատ լեռը կապվում է հենց այդ բնաշխարհի, և ոչ թե այժմյան Մասիսի հետ[24]: Անհրաժեշտ է նշել, որ Գ. Ղափանցյանի այս մեկնաբանությունը նաև համընկնում է վաղ հայկական աղբյուրների հաղորդած տվյալներին: Ըստ Մովսես Խորենացու՝ Արարադի երկիրը գտնվել է «Կադմեայ տան» մոտ[25]: Ըստ ասորեստանյան սեպագիր աղբյուրների՝ «Կադմեայ տան» նախատիպն է եղել Կադմուխի երկիրը: Այն տեղադրվում է Տիգրիսի վերին հոսանքներում՝ Կաշիյարի (ներկայիս՝ Մարդինի) լեռների հյուսիսային փեշերին և դրանից արևելք՝ իր մեջ ընդգրկելով նաև Տիգրիսի ձախափնյա հատվածին հարող որոշ տարածքներ[26]: Ահա և կոնկրետ այն տարածաշրջանը, որտեղ էլ հակված էր Գ. Ղափանցյանը տեսնել Ուրարտական պետության կազմավորումը: Այն համապատասխանում էր հետագայի Մեծ Հայքի Կորդուք նահանգին: Հետևաբար, Կադմուխի-Կադմեայ տան հարավարևելյան սահմանները հարել են ասորեստանյան սեպագիր աղբյուրների Նիբուր (ներկայիս՝ Ջուդի լեռներին), որոնց հետ էլ Փավստոս Բուզանդը նույնացնում է Աստվածաշնչում հիշատակված Կորդուք գավառի Արարատ լեռը[27]: Իսկ Մասիս լեռը Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի մոտ հիշատակված է «Մասիս» անվամբ: Այսպիսով, Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Ուրուատրին գտնվել է Կորդուքի լեռներում, իսկ Նաիրին՝ Արածանի գետի հովտում[28]:

Ուրարտուի վերջին արքաների ժամանակագրության խնդիրն ուրարտագիտության մեջ քննարկվում է առ այսօր: Ի դեպ, այս խնդրին տարբեր կերպ են մոտեցել խորհրդային, հետխորհրդային և արևմտյան պատմագրության ներկայացուցիչները, տարբեր են արքաների գահակալության համար առաջ քաշված ժամանակագրությունները, նրանց հաջորդականության խնդիրը, որի հետ սերտորեն առնչվում է նաև Ուրարտական կայսրության անկման հանգամանքները: Ըստ որում, ժամանակին ուրարտական տերության թուլացումն ու անկումը համարում էին Ռուսա III Էրիմենայորդու գահակալությունից հետո, մինչդեռ հետագայում

---

[24] *ՈւՊ, էջ 124:*

[25] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 33 (գիրք I, գլ. Ժ), էջ 34 (գիրք I, գլ. ԺԱ):*

[26] Н. А р у т ю н я н. Топонимика Урарту *(այսուհետև՝* ТУ*).* Ереван, 1985, с. 98–99.

[27] История Армении Фавстоса Бузанда. Ереван, 1953, с. 20.

[28] *ՈւՊ, էջ 14–16: Նշենք, որ ուրարտացիների՝ հարավից գալու տեսակետին համակարծիք են հետազոտողների մեծ մասը, սակայն Ուրարտու/Ուրուատրիի տարբեր տեղորոշումներով: Այս կապակցությամբ տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Ե, Երևան, 1984, էջ 445, Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում (Հայոց հին պատմություն), Երևան, 1998, էջ 118–121,* Г. А. М е л и к и ш в и л и. Наири-Урарту, с. 21, 155; R. D. B a r n e t t. Urartu.– “Cambridge Ancient History” (*այսուհետև՝* CAH), 3/1, 1982, pp. 331–334, 338f.

ուրարտական գահացանկում ավելացվեցին նոր արքաներ, այն է՝ Ք. ա. VII դարավերջում և VI դարասկզբում:

Պատմագրության մեջ ի հայտ եկած նոր տվյալների առկայությամբ ուրարտագիտության մեջ արտահայտված տեսակետները Ք. ա. VII դարի ուրարտական արքաների հաջորդականության մասին, մեր կարծիքով, վերանայման կարիք ունեն: Այսպես, Գ. Ղափանցյանը Ռուսա I հետո հիշատակում է Արգիշտի II (714–680՞ թթ.), Ռուսա II (680–645 թթ.), Սարդուրի III (կամ IV՞, 646–620 թթ.) արքաներին: Նա Ուրարտուի վերջին արքա է համարում Ռուսա III Էրիմենայորդուն, որի համար կառավարման տարիներ է համարում Ք. ա. 605–585 թթ., երբ Մարաստանը վերացնում է Ուրարտուի անկախ պետականությունը և գրավում նրա մայրաքաղաք Տուշպա-Վանը[29]: Արքաների այս ցանկը, սակայն, վերը նշվածով չի սահմանափակվում, քանի որ ի հայտ եկած սեպագիր նոր աղբյուրները գիտությանը հաղորդել են այլ տվյալներ: 1970-ական թվականներին Ուրարտուի վերջին արքաներ սկսեցին համարվել նաև Սարդուրի IV և Ռուսա IV արքաները:

Արժեքավոր է Ուրարտուի վերջին արքաների ժամանակագրության մասին Ն. Հարությունյանի տեսակետը, ըստ որի՝ 1955 թ. Կարմիր բլուրից հայտնաբերված կավե սալիկի վրա ընթերցել է Ռուսա III համանուն որդի Ռուսա արքայի անունը: Դրանով իսկ նա գիտությանը նվիրել է ուրարտական նոր արքային՝ Ռուսա IV: Ելնելով դրանից՝ բացահայտվում է, որ Ուրարտուի պատմության վերջին շրջանի ժամանակագրության մեջ Սարդուրի III և Ռուսա III հաջորդել են նրանց ժառանգները՝ Սարդուրի IV և Ռուսա IV[30]: Ն. Հարությունյանը տալիս է Ուրարտուի պատմության վերջին շրջանի արքաների հետևյալ ժամանակագրությունը. Ռուսա Արգիշտորդի (Ռուսա II), Սարդուրի Ռուսայորդի (Սարդուրի III), Սարդուրի Սարդուրորդի (Սարդուրի IV), Էրիմենա Սարդուրորդի (՞), Ռուսա Էրիմենայորդի (Ռուսա III) և Ռուսա Ռուսայորդի (Ռուսա IV)[31]:

Այլ է մոտեցումը արևմտյան պատմագրության մեջ: Այստեղ ընդունում են, որ Մարաստանը կարող էր կործանել Ուրարտական պետությունը ոչ թե Ք. ա. 590 – 585 թթ., այլ ավելի վաղ՝ 640–629 թթ. ընկած ժամանակահատվածում:

---

[29] *ՈւՊ, էջ 123:*

[30] Г. А. Меликищвили. Урартские клинообразные надписи (*այսուհետև՝* УКН). М., 1960, № 277, 456, 459—460; КУКН, № 430—432; 445—446. *Անհրաժեշտ է նշել, որ արևմտյան պատմագրության մեջ մերժվում է Սարդուրի IV և Ռուսա IV գահակալության հնարավորությունը, և նրանք ուղղակի ընդունվում են որպես արքայազներ* (*տե՛ս* P. Zimansky. Xenophon and the Urartian Legacy.– PALLAS, 43, Boston, 1995, p. 260, nt. 4; *նույնի՝* An Urartian Ozymandias.– “Biblical Archaeologist”, 58/2, 1995, 98f; И. Н. Медведская. Конец Урарту: новые факты и гипотезы.– Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровского. СПб., 1998, с. 62)*:*

[31] *Տե՛ս* N. V. Aroutiounian. Problume concernant la derniиre pйriode de l'historie d'Urartu.– “Acta Antiqua”, t. XXII. Budapest, 1974, p. 415–427*; նույնի՝* Некоторые вопросы последнего периода истории Урарту, с. 98 и сл.; *նույնի՝* К интерпретации надписи на глиняной булле Кармир-Блура.– ИФЖ, 1962, ¹ 3, с. 95–114; *նույնի՝* Биайнили (Урарту). СПб., 2006, с. 253–261; *նաև՝* И. М. Дьяконов. Последние годы урартского государства, с. 29–39; *նույնի՝* Урартские письма и документы, с. 28-29; *նույնի՝* Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей.– ВДИ, 1981, ¹ 2, с. 34–64.

Այս տեսակետն արտահայտում է Շտ. Քրոլլը[32]*: Նա նաև փոփոխություն է կատարել ուրարտական արքաների ժամանակագրության մեջ, ըստ այդմ՝ Ռուսա Էրիմենայորդու կառավարման շրջանը տանել Ռուսա Արգիշտորդուց հետո*[33] *և առաջարկում է ուրարտական արքաների հետևյալ ցանկը. Արգիշտի II, Ռուսա II, այնուհետև՝ ընտանիքի անդամներ* LÚ.A.NIN-li *պաշտոնում՝ Սարդուրի Ռուսայորդի, Ռուսա Ռուսայորդի, Էրիմենա, Սարդուրի Սար, Ռուսա Սարդուրորդի, ապա ուրարտական թագավորական տան անդամների ցանկը շարունակում են՝ Ռուսա II, Սարդուրի: Շտ. Քրոլլը գտնում է, որ Ք. ա. 609–608 թթ. բաբելոնյան ժամանակագրությունում հիշատակված Ուրարտուն հանդես է գալիս որպես աշխարհագրական տարածք և ոչ թե թագավորություն*[34]*:*

Ներկայացնենք իտալացի հայտնի ուրարտագետ Մ. Սալվինիի տեսակետը: 2007 թ. Սավաջրք գյուղի մոտ (Վան քաղաքից արևելք) նա հայտնաբերել է ամբողջական արձանագիր կոթող, որը լրացնում է Գյովելեքի արձանագրության տեղեկությունները: Ուրարտագետը նշում է, որ հուշարձանը պատկանում է Ռուսա Էրիմենայորդուն (Ռուսա III), և որ գործ ունենք ինչպես Գյովելեքի, այնպես էլ Քեշիշ-գյոլի հայտնի կոթող-վիմագրի կրկնօրինակի հետ: Հետևաբար, հեղինակը ենթադրում է, որ Քեշիշ-գյոլի տարածքում ունենք երկու կոթող՝(1. Գյովելեք+Քեշիշ-գյոլ և 2. Սավաջրք: Ըստ Մ. Սալվինիի՝ երկուսն էլ պատկանում են Ռուսա Էրիմենայորդուն (Ռուսա III) և ոչ թե Ռուսա Արգիշտորդուն (Ռուսա II) կամ Ռուսա Սարդուրորդուն (Ռուսա I): Նորագույն տեղեկությունները Մ. Սալվինիին ստիպում են որոշակի ճշգրտումներ մտցնել Ք. ա. VII ուրարտական արքաների ժամանակագրության հարցերում: Խոսքը վերաբերում է Ռուսայի՝ Արգիշտիի որդու և Ռուսայի՝ Էրիմենայի որդու ժամանակագրության խնդրի նոր մեկնաբանմանը, ըստ որի՝ Ռուսա Արգիշտորդին դառնում է Ռուսա III, իսկ Ռուսա Էրիմենայորդին՝ Ռուսա II: Մ. Սալվինին առաջարկում է ուրարատական արքաների հետևյալ ժամանակագրությունը. Ռուսա Սարդուրորդի (Ռուսա I), Արգիշտի Ռուսայորդի (Արգիշտի II), Ռուսա Արգիշտորդի (Ռուսա II), Ռուսա Էրիմենայորդի (Ռուսա III), Սարդուրի Ռուսայորդի, Սադուրի Սարդուրորդի (Սարդուրի III)[35]*: Նկատենք, որ Միխաել Ռոուֆն էլ ուրարտական վերջին արքաների ժամանակագրությունը ներկայացնում է հետևյալ կերպ. Սարդուրի Արգիշտորդի,*

---

[32] S. K r o l l. Keramik urartдischer Festungen in Iran, AMI, Erg. 2, Berlin, 1976, S. 175. *Տե՛ս նաև՝* И. Н. М е д в е д с к а я. *նշվ. աշխ., էջ* 63:

[33] S. K r o l l. *նշվ. աշխ., էջ* 163. *Հմմտ.* И. М. Д ь я к о н о в. Урартские письма и документы, с. 28; Н. В. А р у т ю н я н. Некоторые вопросы последнего периода истории Урарту, с. 113–114.

[34] S. K r o l l. *նշվ. աշխ., էջ* 166–169, *նույնի՝* Rusa Erimena in Archäologischem Kontext.– Biajnili-Urartu, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, Peeters, 2012, pp. 183–186.

[35] M. S a l v i n i. *նշվ. աշխ., էջ 157–158, նույնի՝* Corpus Dei Testi Urartei (*այսուհետև՝* CTU), vol. I. Roma, 2008, pp. 9–10. U. S e i d l. Rusa Son of Erimena.– Biajnili–Urartu, pp. 177–181.

Ռուսա Էրիմենայորդի, Ռուսա Սարդուրորդի, Արգիշտի Ռուսայորդի, Ռուսա Արգիշտորդի, Սարդուրի[36]*:*

Մասնագիտական գրականության մեջ ուրարտական վերջին արքաների ժամանակագրության մասին արտահայտված տեսակետները վերջնական չեն և կարիք ունեն նոր բացահայտումների[37]*:*

Ուրարտական տեղանուններ: *Վանի թագավորության տեղանվանաբանության ուսումնասիրության պատմությունը սկսվել է XIX դարավերջին և XX դարասկզբներին, երբ հայ հետազոտողներ Հ. Պատկանյանցից, Հ. Սանդալջյանից, Գ. Խալաթյանցից, Կ. Բասմաջյանից բացի, դրանցով զբաղվում էին նաև օտարազգիները՝ Մ. Նիկոլսկին, Մ. Շտրեքը, Ա. Սեյսը, Յ. Մակվարտը, Հ. Հյուբշմանը, Ն. Մառը*[38]*: Սակայն ուրարտական տեղանվանաբանության բնագավառն իր զարգացման բարձունքին հասավ XX դ. երկրորդ կեսին, երբ հայագիտության մեջ իրենց գործունեությունը ծավալեցին Ն. Ադոնցն*[39] *ու Գ. Ղափանցյանը*[40]*: Նրանց հետազոտությունները և տեղանվանաբանական համադրությունները հիմք հանդիսացան նոր մեկնաբանությունների համար, որոնց զարգացումը շարունակվեց արդեն Ս. Երեմյանի, Ն. Հարությունյանի, Գ. Ջահուկյանի, Բ. Հարությունյանի, Հ. Կարագյոզյանի աշխատություններում*[41]*:*

---

[36] M. R o a f. Thureau-Dangin, Lehmann-Haupt, Rusa Sarduriþi and Rusa Erimenaþi.– “Aramazd”, vol. V, Issue 1, 2010, p. 66–82; *ն ո ւ յ ն ի՝* Could Rusa Son of Erimena Have been King of Urartu During Sargon’s Eight Campaign?.– Bijanili-Urartu, pp. 187–216.

[37] P. Z i m a n s k y. Ancient Ararat, Delmar – New York, 1998, p. 24; *Ս. Գ. Հ մ ա յ ա կ յ ա ն. Թելշեբաինի արշավող բանակի երթուղին.– Էրեբունի-Երևան, ՀԳՆՀ, Երևան, 1998, էջ 10–12, Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 50, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.), Երևան, 1998, էջ 72–83*.

[38] *Ք. Պ ա տ կ ա ն յ ա ն ց. Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար, Թիֆլիս, 1883,* J. S a n d a l g i a n. ICU; *ն ո ւ յ ն ի՝ Ասորեստանյա և պարսիկ սեպագիր արձանագրությունք կամ նոցին քաղվածք, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմության կվերաբերին, Վիեննա, 1901,* Г. А. Х а л а т я н ц. О некоторых географических названиях Древней Армении в связи с данными ванских надписей.– Древности Восточные, II, 2. М., 1901. *Կ. Բ ա ս մ ա ջ յ ա ն. Հայ նախարարությունները բևեռաձև արձանագրության մեջ.– «Բանասեր» (Փարիզ), 1902, № 7–9,* М. В. Н и к о л ь с к и й. Клинообразные надписи Закавказья.– Материалы по археологии Кавказа, V. М., 1896, с. 72; M. S t r e c k. Das Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdist n und Westpersien nach der babylonisch-assyrischen Keilinschriften.– “Zeitschrift fьr Assyriologie und Verwandte bebiete” (*այսուհետև՝* ZA), XV Band, 2-4 Heft, 1901, S. 257–382 ZA, 1898, Band 13, Heft 1, S. 57–110; ZA, 1899, Band 14, Heft 1-2, ZA 1901, Band 15, HEFT 2-4, S. 257–382; A. H. S a y c e. The Cuneiform Inscriptions of Van.– “Journal of the Royal Asiatic Society of Great Britain Ireland”, XIV, London, 1882, XX, 1888, XXV, 1893, XXVI, 1894, XXXIII, 1901, XXXVIII, 1906, XLIV, 1912, LXI, 1929, LXIV, 1932; *ն ո ւ յ ն ի՝* The Kingdom of Van (Urartu), The Cambridge History, III, 2nd ed., Cambridge, 1929; J. M a r q u a r t. Eranšahr nach der Geographie des Ps. Movses Xorenaci, Berlin, 1901; H. H ь b s c h m a n n. Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904; Н. М а р р, И. О р б е л и. Археологическая экспедиция 1916 г. в Ван. Петербург, 1922, с. 58–59.

[39] *Տե՛ս* N. A d o n t z. 1946; *ն ո ւ յ ն ի՝ ՀՊ, էջ 430, ն ո ւ յ ն ի՝ ՆԱՀՊ, հ. V:*

[40] *Տե՛ս ՈՒՊ, նաև՝* ИЛТДА.

[41] *Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963,* Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту (*այսուհետև՝* ТУ). Ереван, 1985; *Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, ն ո ւ յ ն ի՝* Armenian Words and Proper Names in Urartian Inscriptions, Proceedings of the Fourth International Conference on Armenian Linguistics, Cleveland State University, Cleveland, Ohio, September 14–18, 1991,

Գ. Ղափանցյանն անդրադարձել է ուրարտական աղբյուրների m/KURAbiliani *- հայկական Աբեղեանք գավառին՝ այն տեղորոշելով Արաքս գետի ձախ ափին, այսինքն՝ այն նույն վայրում, որտեղ գտնվել է Այրարատ նահանգի երրորդ գավառը՝ Աբեղեանքը, Կաղզվանի մերձավորությամբ*[42]*:* KUR/mEriaḫi *երկիրն էլ համապատասխանեցրել է ×Աշխարհացոյց»-ի Այրարատ նահանգի ութերորդ գավառ Շիրակին, որը գտնվում էր Ախուրյան գետի միջին և ստորին հոսանքի հովտում*[43]*: Ուրարտական աղբյուրների Անաշեն նա նույնացնում է Ալաշկերտ քաղաքին*[44]*, Վելիքուխի երկիրը՝ Գեղարքունիքին*[45]*,* URUZuani*-ն համադրում է Արաքս գետի վերին հոսանքների շրջանում գտնվող այժմյան Զիվինի հետ*[46]*: Պիլակկինի երկրանունը ուրարտագետը նույնացնում է ներկայիս Բելխան քաղաքանվան հետ, որը գտնվում է Մուշարյան լեռների մոտակայքում՝ Մալաթիա և Խարբերդ քաղաքների միջև*[47]*, Շեբեթերիա քաղաքը, որտեղ Մենուա արքան կառուցել է* iarani *՝ տաճար, նույնացնում է այժմյան Պալուի հետ*[48]*, Խուզանա երկիրը՝* URUḪuzanani KURebanie/KUR-nie*- ն՝ տեղորոշում է Փերի գետի ներքին հոսանքում, որտեղ, ըստ նրա, գոյություն է ունեցել «Խոզն-գեղ» գյուղը*[49]*: Գ. Ղափանցյանը* KURḪate *երկրի տակ ենթադրում է վաղնջական խեթական պետությունը՝ Մալաթիայի տարածքում*[50]*: Ծուփանի-Ծովք երկրի Շուրիշիլի քաղաքը տեղադրում է Ճապաղջրից հարավ գտնվող Սիրիսիրի բնակավայրի հետ ՝Դարկոշ կամ Չեֆթալա լեռներին կից՝ Արածանիի ձախափնյա հատվածում, Թարխիգամանի քաղաքանվանը վերագրում է «խեթական» ծագում, քանի որ այն առնչվում է Թարխու* (*հայկ. Տորք*) *դիցանվան հետ*[51]*: Եփրատից այն կողմ գտնվող Մարմուանի*

New York, 1992, pp. 49–59; *Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը.– ՊԲՀ, 1994, -1–2, էջ 256–267, ն ո ւ յ ն ի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ □Աշխարհացոյց□-ի, Մաս Ա, Երևան, 2001, Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. նշվ. աշխ.:*

[42] Н. М а р р, И. О р б е л и. Археологическая экспедиция 1916 года в Ван, с. 59; Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 301; *Վ. Բ ա ս մ ա ջ ե ա ն. Հայ նախարարությունները բևեռաձև արձանագրության մեջ, էջ 239,* ИЛТДА, с. 6.

[43] ИЛТДА, с. 8, ТУ, с. 258–259; *Ս. Ե ր ե մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 74,* I. D i a k o n o f f, S. K a s h k a i. Geographical Names According to Urartian Texts (GNAUT), Band 9, Wies baden, 1981, c. 30–31; M. S a l v i n i. Geschichte und Kultur der Urartäer, S. 71; *Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 126–127, Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 193: Հմմտ.* Г. М е л и к и ш в и л и. УКН, с. 425. *Գ. Ղափանցյանի կարծիքով,* Eria□i *տեղանունն իր մեջ պարունակում է հայերեն* երէ՝ *«որսի կենդանի» արմատը (*ИЛР, т. 2. Ереван, 1975, с. 66–69; *Վ. Խ ա չ ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 126):*

[44] Н. М а р р. Фрагмент халдской надписи из Алашкерта.– «Известия» Российская Академия истории материальной культуры (*այսուհետև* ՝ РАИМК), т. I. П., 1921, с. 51–60; ИЛТДА, с. 16.

[45] ИЛТДА, с. 20.

[46] ИЛТДА, с. 32.

[47] ИЛТДА, с. 26; *ՈՒՊ, էջ 127–128:*

[48] ИЛТДА, с. 33.

[49] ИЛТДА, с. 33-34.

[50] ИЛТДА, с. 34.

[51] ИЛТДА, с. 34.

քաղաքը նա տեղայնացնում է Մելիտեայից (ներկայիս Մալաթիայից) ոչ հեռու գտնվող, այժմյան Մամուրակա բնակավայրի հետ[52], KUR Niribai ḫubi-*ն ներկայացնում է որպես Նիրիբա-հովտի երկիր և վերագրում խեթական աշխարհին, այն դեպքում, երբ այդ երկիրը տեղորոշվում է Տիգրիսի ակունքներում՝ Մարդինի լեռների մոտ*[53]*: Ուրարտական սեպագիր աղբյուրների Ծուփանին համադրում է խեթական աղբյուրների Իսուվայի և ասորեստանյան աղբյուրների Իշուայի հետ, որը տեղայնացվում է Արածանիի՝ Եփրատի հետ միախառնման շրջանում և հարակից տարածքներում*[54]*: Մալաթիայի մերձեփրատյան* URU Aruši *քաղաք-ամրոցը նա իրավացիորեն համադրում է այժմյան* Ալուսի *հետ, Խարբերդի մոտ՝ Տիգրիսի գետաբերանից (Գյոլջուկ լճից) հյուսիս-արևելք*[55]*:*

Կուլբիտարրինի՝ URU Qulbitarrini *քաղաք-ամրոցի անունը Գ. Ղափանցյանը բաժանում է* kul *և* bitarrini *ձների, որտեղ անվան երկրորդ մասն ընկալում է «ամրոց» իմաստով՝ համեմատելով ուրարտերեն* patari՝ *«քաղաք», ասոր.* birtu=*հայ. բերդ՝ «ամրոց» ձները: Հետևաբար, Կուլբիտարինին հնարավոր է, որ համապատասխանում է հին հայկական Կողոբերդին, այսինքն՝ «Քող ամրոց»-ին՝ հիշատակված Քեղի գետի հոսանքի շրջանում՝ Խարբերդից հյուսիս-արևելք*[56]*:* URU Meluiani *քաղաքն էլ նույնացնում է Եփրատի արևմտյան ափին գտնվող ներկայիս* Մալիանի *հետ՝ Կեբանմադենից հարավ-արևմուտք*[57]*, ինչն ընդունել են Հ. Մանանդյանը, Մ. վան Լունը, Ն. Հարությունյանը*[58]*:*

Գ. Ղափանցյանը Տարիունի երկիրը համադրել է պատմական Հայաստանի Տարոն աշխարհի հետ, որը տարածվում էր Վանա լճից արևմուտք[59]*: Տեղայնացման այս կարծիքը վաղուց արդեն չի ընդունվում մասնագիտական գրականության մեջ: Քանի որ ուրարտական դարաշրջանի Տարիունի երկրի տարածքը հարավ-արևելքից հասնում էր մինչև Արաքս գետի վերին հոսանքներում գտնվող հայկական միջնադարյան Բասեն գավառին, Ն. Հարությունյանը ենթադրում է, որ Դարոյնք բնակատեղիի անվան մեջ*

---

[52] ИЛТДА, с. 36.

[53] ИЛТДА, с. 35; M. S t r e c k. Das Gebiet der heutigen Landschaften Armenien, Kurdistan und Westpersien nach der babylonisch-assyrischen Keilinschriften (*այսուհետև՝* GHLA).– ZA, XIII Band, 1 Heft, Weimar, 1898, p. 82–87; Г. А. М е л и к и ш в и л и. УКН, с. 436; И. Д ь я к о н о в. Ассиро-вавилонские источники по истории Урарту (*այսուհետև՝* АВИИУ).– ВДИ, 1951, ¹ 2, 3, 4, 26, прим. 50; I. D i a k o n o f f, S. K a s h k a i. GNAUT, с. 61; ТУ, с. 152-154; *նույնի՝* Биайнили (Урарту), с. 72–73; *Հմմտ. Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 170:*

[54] Г. К а п а н ц я н. Хайаса, с. 162, 286.

[55] *Նույն տեղում, էջ 42:*

[56] *Նույն տեղում, էջ 41, ՈՒՊ, էջ 69, 127:*

[57] ИЛТДА, с. 38.

[58] Я. М а н а н д я н. О некоторых спорных проблемах..., с. 134; M. v a n L o o n. The Euphrates Mentioned by Sarduri II of Urartu.– “Anatolian Studies”. Istanbul, 1974, pp. 187–194; ТУ, с. 140–141.

[59] ИЛТДА, с. 41–42.

(այժմյան Հասանկալե - Փասինլարը) պահպանվել է ուրարտական դարաշրջանի Տարիունի երկրի անվանումը[60]*:*

Նկատենք, որ դեռևս 1931 թ. Գ. Ղափանցյանն ուրարտական սեպագիր աղբյուրների Ուրտեխին նույնացրել է «Աշխարհացոյց»-ի՝ Մեծ Հայքի 10-րդ աշխարհի Արցախի հետ[61]*:*

Հաջորդ համադրությունը վերաբերում է ուրարտական սեպագիր աղբյուրների Զաբախա երկրին: Գ. Ղափանցյանը ^{ŠADI}Sirimutara*-ն ընթերցում Շիրիմուտարա ձևով և այն համարում երկրանուն*[62]*, մինչդեռ դա այսօր չի ընդունվում մասնագիտական գրականության մեջ*[63]*: Նշենք, որ Զաբախա-Ջավախք համադրությունն առաջին անգամ կատարել է Հ. Սանդալջյանը*[64]*: Գ. Ղափանցյանը նրա կատարած այս համադրությունը հնարավոր է համարում միայն հնչյունակազմական տեսանկյունից, և Զաբախա-Ջավախքի՝ ներկայիս Ախալքալաքի շրջանին համապատասխանելու միակ խոչընդոտը համարում է այն, որ Զաբախա երկիրն ուրարտական աղբյուրներում հիշատակվում է նաև* ^{URU}Uzinabitarna *քաղաքից և* Širimutara *(այսինքն՝ Սիրիմուտարա լեռից) երկրից ոչ շատ հեռու*[65]*:* ^{URU}Uzinabitarna *անունը նա ընկալում է որպես բարդ կազմություն՝* Uzina-bitarni *ձևով և թարգմանում «Ուզինայի ամրոց»*[66]*: Նա առավել հավանական է համարում ուրարտական Զաբախայի տեղադրումը այժմյան Ջավախքից հարավ: Դրա մասին են վկայում, ըստ նրա, Արգիշտի I հյուսիս կատարած արշավանքները՝ մինչև Մարմաշեն (Գյումրիի մոտ), Գուլիջան (Արագած լեռից հյուսիս) և Սարիղամիշ (Կարսից հարավ) ու առաջարկում է ուրարտական աղբյուրների Զաբախան նույնացնել հայկական Բասենի կամ Կարսի շրջանների հետ*[67]*: Ի տարբերություն Գ. Ղափանցյանի՝ մասնագիտական գրականության մեջ ուրարտական սեպագիր աղբյուրների* ^{KUR}Zabaha*-յի*

---

[60] Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту), с. 402–408; ТУ, с. 176–177. *Հմմտ. афд, ¿з 164–165,* ИЛТДА, с. 41–42; Г. А. М е л и к и ш в и л и. УКН, с. 442.

[61] Г. К а п а н ц я н. Chetto-Armeniaca, с. 104; КУКН, с. 250, 529; Н. В. А р у т ю н я н. Биайнили (Урарту), с. 205, 359; Г. М е л и к и ш в и л и. УКН, с. 446; ТУ, с. 211–212; КУКН, с. 529; *Հ. Կ ա ր ա գ յ ո զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 184–185, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Արցախի, Հայոց արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, էջ 256–266: Հմմտ.* Г. М е л и к и ш в и л и. УКН, с. 446; I. D i a k o n o f f, S. K a s h k a i. GNAUT, c. 96 *(այստեղ* ^{KUR}Urtei *ճիշտ ընթերցման փոխարեն տեղ է գտել* ^{KUR}Ur-tՌ-i-i-(?)-ni *սխալ ընթերցումը):*

[62] ИЛТДА, с. 45.

[63] Г. М е л и к и ш в и л и. УКН, с. 441. *Ժ. Դյակոնովն ու Ս. Կաշկայը այս տեղանունը ընթերցում են լիովին այլ ձևով՝* pa-re ^{KUR}si-ri-mu tar-a ^{KUR}ba-ba-nè (I. D i a k o n o f f, S. K a s h k a i. GNAUT, c. 75)*:*

[64] *Հ. Ս ա ն տ ա լ ճ ե ա ն. նշվ. աշխ., էջ 44:*

[65] ИЛТДА, с. 46. *Գ. Ղափանցյանը գտնում է, որ ուրարտական Զաբախայի տեղայնացումը ստույգ կլինի միայն այն դեպքում, եթե հստակորեն տեղորոշվեն* ^{URU}Uzinabitarna *քաղաքը և* Širimutara *երկիրը (տե՛ս էջ 47, 48):*

[66] ИЛТДА, с. 46.

[67] *Նույն տեղում, էջ 47, 48:*

համապատասխանությունը հայկական Գուգարաց բդեշխության 8-րդ գավառ Ջավախքին ընդունում են մի շարք ուրարտագետներ[68]*:*

Ուրարտական դիցարանը: *Ուրարտուի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի Վանի թագավորության դիցարանի հետազոտման խնդիրը: Այդ մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մեծապես նպաստել են հարցի հետ առնչվող բազմաթիվ խնդիրների լուսաբանմանն ու պարզաբանմանը:*

Ուրարտական դիցարանի ուսումնասիրությամբ զբաղվել են ինչպես օտարազգի, այնպես էլ հայ հետազոտողներ: Այդ գիտնականներն են՝ Պ. Կալմեյերը, Ի. Դյակոնովը, Մ. Ռիմշնայդերը, Ի. Լոսևան, Մ. վան Լունը, Լ. Բիյագովը[69]*: Այսօր այն հետազոտում են՝ Ա. Պետրոսյանը, Ս. Հմայակյանը, Ե. Գրեկյանը, Մ. Բադալյանը, Կ. Յակուբիակը, Թ. Թանյերի-Էրդեմիրը, Ա. Չիլինգիրօղլուն, Ու. Զայդլը*[70]*:*

Չնայած տասնամյակներ են անցել, սակայն այս բնագավառում իր առանձնահատուկ տեղն ունի Գ. Ղափանցյանի ներդրումը: Ստեղծագործելով անցյալ դարի կեսերին՝ նա կատարել է այնպիսի դիտարկումներ, որոնք հիմք են ծառայում նոր ու հետաքրքիր եզրակացությունների համար:

Ուրարտական դիցարանի ուսումնասիրման համար հիմնական աղբյուրը Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության տարիներին (Ք. ա. IX դ. վերջին քառորդ) փորագրված Մհերի դռան ծավալուն արձանագրությունն է:

---

[68] УКН, с. 446; ТУ, с. 76—77; КУКН, с. 530; *Հ. Կարագյոզյան. նշվ. աշխ., էջ 203–204,* I. Diakonoff, S. Kashkai. GNAUT, c. 104. *Հմմտ. Ս. Երեմյան. նշվ. աշխ., էջ 78:*

[69] U. Seidel. Eine frühurartäische Siegeldarstellung.– “Anatolian Studies”, XXXIII, 1983, p. 103–114; *նույնի՝* Символ Халди.– Древний Восток, 4. Ереван, 1983, с. 179–189; И. Дьяконов. К вопросу о символе Халди.– Древний Восток, 4, с. 190–194; M. Riemschneider. Die urartдischen Gottheiten.– “Orientalia”, vol. 32, 1963, p. 148–168; И. Лосева. Некоторые урартские ювелирные изделия с изображением ритуальных сцен (к вопросу об иконографии бога Халди и богини Арубани).– Древний Восток. М., 1962, с. 300–311; M. van Loon. Anatolia in the Earlier First Millenium B.C., Urartian Iconography, Leiden, 1991, pp. 15–29; Л. Н. Биягов. К вопросу об интерпретации Халди и Арубани-Багбарту.– «Вестник общественных наук» АН АрмССР, 1974, ¹ 11, с. 98–101.

[70] *Ա. Պետրոսյան. Ուրարտուի վերնախավի էթնիկական պատկանելության խնդիրը.– ՊԲՀ, 2005, -3, էջ 208–226, նույնի՝ Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը.– ՊԲՀ, 2002, -2, էջ 243–270, նույնի՝ Տիր և Մաշտոց. դպրության աստվածը և գրերի ստեղծողը.– Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, Երևան, 2006, էջ 49–53, Ս. Հմայակյան. Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումն Ուրարտուում.– ՊԲՀ, 1986, -1, էջ 113–133, նույնի՝ Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990,* Y. Grekyan. The Will of Menua and the Gods of Urartu.– “Aramazd”, vol. I, 2006, p. 150–193; *Մ. Բադալյան. Տարին և Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը.– Մերձավոր Արևելք, VI, Երևան, 2010, էջ 36–43, նույնի՝ Խալդի: Ուրարտուում միաստվածության զարգացման վերականգման փորձ.– Մերձավոր Արևելք, VII, Երևան, 2011, էջ 80–89,* K. Jakubiak. Eski Dogubayazit – A Tomb or a Sanctuary?.– Proceedings of the 4th International Congress of the Archaeology of the Ancient Near East, vol. I, Harrassowitz Verlag – Wiesbaden, 2008, pp. 403-413; T. Tanyeri-Erdemir. The Temple and the King: Urartian Ritual Spaces and Their Role in Royal Ideology.– Culture and History of the Ancient Near East, vol. 26, Leiden-Boston, 2007, pp. 205–222; U. Seidl. The Urartian Ištar-Šawuška.– “Anatolian Studies”, 2005, № 5, pp. 167–173.

Դրա մեջ նշվում է, որ Իշպուինի և Մենուա արքաներն այդ «դարպաս»-ը՝ (GIŠ)Kը*-ն, նվիրում են Խալդի աստծուն՝ տիրոջը: Վերջինիս պատվին հրամայվում է զոհեր մատուցել Ուրարտուի բոլոր աստվածներին, որտեղ հիշատակվում է յուրաքանչյուր աստվածության անունը և նրա պատվին մատուցվելիք զոհերի քանակը*[71]*:*

Միերի դռան արձանագրությունից օգտվել է նաև Գ. Ղափանցյանը: Ստորև բերում ենք Միերի դռան ուրարտական դիցարանի դիցանունները՝ ըստ Գ. Ղափանցյանի համակարգման[72]*:*

1. Միերի դռան աստվածների ցանկը

I խումբ՝ dҖaldi, dTeišeba, dArdini[73].

II խումբ՝ dҖutuini, dTurani, dUa, dNalaini, dŠebitu, dArsimela.

III խումբ[74]*՝* dAnapša, dDiduaini, dSIN (ê»É³ñ¹Ç), dAtibini, dQuera, dElipri, dTaraini, dAdaruta, dIrmušini, dAldutušini[75], dErina, dŠiniri, dUnina, dAiraini, dZuzumaru, dҖara, dAraṣa (Araza), dZikekuni[76], dUra, dArṣibedini, dArni, dŠuba, dElia'a, dTalapura, dQilibani[77].

2. Միերի դռան աստվածուհիների ցանկը

I խումբ՝ dAruba(i)ni (dUarubani[78]), dBaba, dTušpuea, dAui[79].

II խումբ՝ dSardi, dṢinuiardi[80].

III խումբ՝ dIšҖari, dBarṣia, dSilia, dAr'a, dAdia (Adipia), dUia, dArdi[81].

---

[71] *Այդ գաղափարագրի համապատասխանությունն ուրարտերենում* še(i)štili *բառն է (տե՛ս* КУКН, с. 418*):*

[72] *Ուրարտուի դիցարանի արական և իգական աստվածությունների նոր բաժանումը՝ վերլուծված և համակարգված տե՛ս Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 24–25:*

[73] *Ուրարտական արևի աստծո անունը* dŠiuini *է, իսկ* dArdini*-ն այս դիցանվան տասնամյակներ առաջ մերժված ձևն է:*

[74] *ՈւՊ, էջ 44:*

[75] *Տե՛ս* КУКН, № 38, I_{10}, II_{15} ; M. S a l v i n i. CTU A 5–29, CTU A 5–12.

[76] *Տե՛ս* КУКН, № *38,* II_{19}, I_{11} ; Salvini M., CTU A 5-29, CTU A 5-12.

[77] *Տե՛ս ՈՒՊ, էջ 46:*

[78] УКН, № 27, с. 22; *ն ո ւ յ ն ի՝* Die Götterpaartrias an der Spitze des urartäischen Pantheons.– "Orientalia", vol. 34, fasc. 4, 1965, S. 442.

[79] *Ուրարտական պանթեոնի այս աստվածային զույգերի մասին ուշադրության արժանի են Ա. Պետրոսյանի դիտարկումները, որը այս եռյակին համադրում է հնդեվրոպական դիցաբանության առանձնահատկությունների հետ (տե՛ս Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Ուրարտական գլխավոր աստվածների եռյակը և պետության իշխող վերնախավի ծագման խնդիրը, էջ 243–270, ն ո ւ յ ն ի՝ Ուրարտա-հնդեվրոպական և հայկական առնչությունների շուրջ.– Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006, էջ 5–28:*

[80] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 25:*

[81] *ՈՒՊ, էջ 45–46, Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 25:*

Ուրարտական դիցարանի ուսումնասիրության գործում Գ. Ղափանցյանի ներդրումը կարող ենք ձևակերպել հետևյալ կերպ.

ա) նա առաջինն է ուսումնասիրել բիայնական դիցարանի կառուցվածքը (թեև սահմանափակվել է միայն աստվածությունների դասակարգմամբ)՝ այն բաժանելով վեց դասի. **I** – 3 աստվածություն, **II** – 6 աստվածություն, **III** – 25 աստվածություն, **IV** – 4 աստվածություն, **V** – 2 աստվածություն, **VI** - 7 աստվածություն[82],

բ) առաջինն է անդրադարձել Ադարութա աստվածությանը և փորձել նրան բնութագրել որպես ծնունդն ու սերունդը հովանավորող աստվածություն, Իրմուշինիին ներկայացրել է որպես հիվանդություններից փրկող աստվածություն, «Աստված, որը հոգիներ է տեղափոխում» աստվածությանը որակել է որպես անդրաշխարհի ներկայացուցիչ[83],

գ) Խարա դիցանունը բացատրում է ուրարտերեն ḫare՝ *«ճանապարհ» բառով՝ այն բնութագրելով որպես ճանապարհների աստվածություն: Խուտուինին դիցանունն էլ Գ. Ղափանցյանը ստուգաբանում է ուրարտերեն* ututui՝ *ենթադրյալ «իշխանություն» բառով[84], որն ընդունել են Գ. Մելիքիշվիլին[85] և Ն. Հարությունյանը[86],*

դ) նշենք, որ ուրարտական դիցարանի ուսումնասիրության բնագավառում ամենախրթին հարցերից մեկը արական և իգական աստվածությունների տարբերակման ու համակարգման խնդիրն է: Դա ևս ուրարտագետին հաջողվել է լուծել: Արժևորելով Գ. Ղափանցյանի ներդրումն այս բնագավառում՝ կարող ենք արձանագրել, որ հայ իրականության մեջ նա առաջինն է, որ ուրարտական աստվածությունները դասակարգել է երեք խմբի՝ երեք իգական և երեք արական, ճիշտ է բնորոշել Խալդի աստծու դերն Ուրարտուում՝ այն որակելով «խալդամոլություն» անվամբ:

Ամփոփելով՝ նշենք. ուրարտագիտության մեջ Գ. Ղափանցյանի բերած նորույթները նշված փաստերով չեն սահմանափակվում, դրանք շատ ու շատ են: Բավական ժամանակ է անցել, ուրարտագիտությունը մեծ առաջընթաց է ապրել, սակայն նրա դիտարկումները Ուրարտուի պատմության, լեզվի, դիցանունների, տեղանունների ուսումնասիրության առումով, այսօր էլ, իրավամբ, ուրույն տեղ ունեն գիտության խնդրո առարկա բնագավառում:

---

[82] *ՈՒՊ, էջ 47:*

[83] *Տե՛ս* Г. К а п а н ц я н. Об урартском божестве Adarutha, с. 25–26, 27–31.

[84] *ՈՒՊ, էջ 46:*

[85] Г. М е л и к и ш в и л и. УКН, с. 397.

[86] КУКН, с. 483. *Տե՛ս նաև՝ Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 47:*

ГРИГОР КАПАНЦЯН – УРАРТОЛОГ

СОНА ГРИГОРЯН

Р е з ю м е

Выдающийся армянский ученый-востоковед Григор Капанцян (1887–1957) внес существенный вклад как в армянское урартоведение, так и во всемирное изучение клинописных цивилизаций. Его исследования по военно-политической истории, топономике, лингвистике и пантеону Ванского царства трудно переоценить, область его исследований обширна. Однако, в силу определенных причин, многие исследования Капанцяна остались неизвестными советским, постсоветским и зарубежным ученым. Следует также отметить, что многие постулаты, выдвинутые им, нуждаются в дополнениях в сопоставлении с гипотезами, выдвинутыми в специальной литературе в более позднее время.

GRIGOR GHAPANTSYAN AS AN URARTOLOGIST

SONA GRIGORYAN

S u m m a r y

The contribution of the famous Armenian scholar and orientalist Grigor Ghapantsyan (1887–1957) to the Armenian Urartology, as well as to the investigation of the international cuneiform civilizations is great. His input into the investigation of the military history of the Kingdom of Van, its toponymy, its linguistics, as well as its pantheon is immense. The sphere of his investigations is very extensive. But, on account of definite reasons many of Ghapantsyan's investigations were not known to the Soviet, post-Soviet and foreign scholars. It should also be noted that many conclusions he has reached need to be supplemented compared with the opinions which have been expressed in the subsequent professional literature.